

Գեղամ Մ. Ասատրյան

9-11-ՐԴ ԴԴ. ԽԱՉՔԱՐԵՐԸ ՄԱՔՐԱՎԱՆՔՈՒՄ*

Բանալի բառեր – Մաքրավանք, 9-11-րդ դդ. խաչքարեր, վաղագույն խաչքարերի պարզություն, Կոտայքի գեղարվեստական ոճ, խաչքարերի «հրազդանյան տիպ», «Անիի ոճ»:

Մուտք

Մաքրավանքի համալիրը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզկենտրոն Հրազդան քաղաքի հյուսիս-արևմուտքում: Երկար տարիներ բնակավայրը կոչվել է Նախամարք:

Անվանի պատմաբան Թ. Հակոբյանը, անդրադառնալով գյուղին և վանքին, նշում է. «Պատմական Հայաստանում կար Վարաժնունիք անվամբ երեք գավառ՝ մեկը Տուրուբերանում, մյուսը՝ Վասպուրականում, իսկ երրորդը՝ Այրարատում: Վերջինիս Վարաժնունիք գավառը գրավում էր Մարմարիկ գետի միջին և վերին հոսանքների շրջանը և Հրազդանի վերնագավառը: ...Մաքրավանքը գտնվում է այժմյան Հրազդանի շրջանի Մաքրավան գյուղում, որն այժմ միացված է Հրազդան քաղաքին և կազմում է վերջինիս թաղամասերից մեկը: Այս վանքը կառուցվել է երկու շրջանով: ...Բուն վանքի հոյակապ տաճարը կառուցվել է XIII դարում և այժմ կանգուն է՝ շրջապատված բազում խաչքարերով: Կեչառքն (նկատի ունի Կեչառիսը՝ այժմյան Ծաղկաձորի տարածքում –Գ. Ա.) ու Մաքրավանքը երբեմն հիշատակվում են իբրև Նիգ գավառի վայրեր»¹:

Սույն ուսումնասիրության գլխավոր նպատակը համալիրի վաղ շրջանի խաչքարերին (9-11-րդ դդ.) անդրադառնալն է՝ բնականաբար դրանք դիտարկելով ընդհանուր խաչքարային արվեստի զարգացման հոլովություն: Ցավոք, ցայսօր ուսումնասիրողների ուշադրությունից ինչ-որ չափով դուրս են մնացել այդ հոյակերտ խաչքարերը, ուստի բացակայում են ինչպես դրանց, այնպես էլ առհասարակ Մաքրավանքին նվիրված առանձին ուսումնասիրությունները և հրապարակումները, եղածներն էլ դրանք դիտարկում են միայն խաչքարային արվեստի զարգացման ընդհանուր կամ տարածաշրջանային համատեքստում²:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 15.04.2018:

¹ Հակոբյան Թ. Խ., Հայ ժողովրդի պատմության հիշարժան վայրերը, Եր., «Լույս», 1990, էջ 100-101:

² Դրանցից պետք է առանձնացնել Հ. Լ. Պետրոսյանի «Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը» հիմնարար ուսումնասիրությունը (Եր., «Փրինթինգո», 2008) և Տ. Վ. Վարդանեսովայի «Культура Хачкаров Арагацотна и Котайка IX-XVII вв.», (Եր., Издательство ЕГУ, 2016)

1. Խաչքարերի ձևավորման ընթացքը և վաղ շրջանի խաչքարերը Մաքրավանքում

Մաքրավանքի համալիրի ողջ տարածքում կան տարբեր դարերի և պահպանվածության տարբեր աստիճան ունեցող բազմաթիվ խաչքարեր: Խաչքարեր կան ինչպես վանքի շուրջը, այնպես էլ պատերին ագուցված: Միայն եկեղեցու արևելյան կողմում կա շուրջ 15 խաչքար: Բազմաթիվ խաչքարեր կան նախկին գավթի տարածքում՝ գլխավոր եկեղեցու մուտքի դիմացն ընդգրկող հատվածում: Այդտեղ նկատելի են ինչպես տեղում կանգնեցված խաչքարեր, այնպես էլ այլ հատվածներից գտնված խաչքարերի կտորներ, որոշները՝ պահպանված նվազագույն աստիճանի: Համաձայն տարբեր փաստաթղթային ցուցակների՝ համալիրի խաչքարերը հիմնականում պատկանում են 9-15-րդ դդ., սակայն ըստ մեզ՝ 9-րդ դարի խաչքարեր այստեղ դժվար թե շատ քանակությամբ լինեն: Կարծում ենք, որ Մաքրավանքում առաջին խաչքարերը պետք է որ ի հայտ գային միայն համալիրի առաջին մատուռի կառուցումից, այն է՝ 10-րդ դարից հետո, քանզի «հազվագիտ է մեկուսացած դիրքի մեջ խաչքարեր գտնել...»³: Մի կողմից՝ այս հանգամանքը, մյուս կողմից՝ պարզությամբ աչքի ընկնող խաչքարերի մեծ քանակի բացակայությունը մեզ թույլ են տալիս եզրակացնել, որ համալիրում ավելի շատ քանակությամբ վաղագույն խաչքարերը պետք է որ 10-11-րդ դարերի ստեղծագործություններ լինեն: Խաչքարերի ծաղկման շրջանը Մաքրավանքում պետք է որ համընկներ գլխավոր եկեղեցու կառուցմանը, ինչը տրամաբանական է թե՛ առհասարակ խաչքարային արվեստի զարգացման տեսանկյունից, թե՛ պայմանավորված այն հանգամանքով, որ մեկ այլ տեղեկության համաձայն էլ գավթի խաչքարերից 14-ը քանդակվել են 1240-1265 թթ. և պատրաստվել միևնույն վարպետի ձեռքով: Մյուս խաչքարերը քանդակվել են 10-13-րդ դարերում և կրում են մի քանի վարպետների կնիքներ⁴: Վիճահարույց է նույնիսկ 11-րդ դարը, երբ խաչքարային արվեստը ողջ երկրում դրսևորվում է որոշակի անհամաչափություններով: Այդ ժամանակաշրջանում, հատկապես դարի երկրորդ կեսից ընդհուպ մինչև 12-րդ դարի առաջին կեսը, որպես հետևանք նախ սելջուկյան արշավանքների, ապա՝ նրանց տիրապետության, նկատվում է ընդհանուր մշակույթի անկում, և ի հետևանս դրա՝ մի կողմից՝ խաչքարերի կանգնեցման նվազում և թվակիր խաչքարերի պակաս, մյուս կողմից՝ վերադարձ դեպի հին և պարզունակ տեսակները⁵: Ակնհայտ է, որ վաղ խաչքարերի ձևավորման ընթացքը ոչ թե զուտ արվեստագիտական, այլ քաղաքական-դավանական ու արվեստագիտական միասնական գործընթաց էր⁶: Մեկ այլ բնութագրմամբ՝ «սկզբնական խաչքարերը, լինելով պարզունակ կոթողներ, ձևավորվել են ոչ թե «գիտական»-պաշտոնական, այլ ժողովրդական միջավայրում: Ելնելով խաչքարերի ծագումնաբանության ժողովրդական բնույթից՝ դրանց մշակման և զարգացման հետագա ճանապարհը կարելի

բոլորովին վերջերս հրատարակված աշխատությունը, որոնցում առկա են Մաքրավանքի խաչքարերի վերաբերող հատվածներ:

3 Khachkar, Documenti di architettura Armena, N 2, Mil., 1977, p. 73 (տեքստը՝ Լ. Ագարյանի և Ա. Մանուկյանի):

4 Տե՛ս Հարությունյան Զ., Տունդարձի քարավաններ, Եր., 2012, էջ 187:

5 Տե՛ս Պետրոսյան Հ. Լ., Խաչքար. ծագումը..., էջ 111:

6 Տե՛ս Պետրոսյան Հ. Լ., Խաչքար, Եր., «Ջանգակ», 2015, էջ 14:

է համարել պաշտոնականացման ու «կուլտուրականացման» և ըստ այդմ՝ նշել պաշտոնականացման մի քանի ուղղություններ...»⁷: Մաքրավանքի համալիրի տարբեր հատվածներում թեև ոչ մեծ քանակությամբ, այդուամենայնիվ կան վաղ խաչքարերի պարզությամբ աչքի ընկնող խաչքարեր: Իսկ զրն է այդ պարզությունը, և առհասարակ ինչ է վաղ շրջանի խաչքարը: Ուսումնասիրողները 9–10–րդ դարերը խաչքարերի ճարտարապետական արտաքինի, հորինվածքի ու արձանագրական տեքստի ձևավորման փուլն են համարում: Այդ շրջանի խաչքարերի ձևավորումը պայմանավորվում է հարթ մակերեսի վրա վաղմիջնադարյան հորինվածքների և դեպի ստորին հատված ուղղանկյուն կամ կամարաձև խորանի մեջ ներառվող կլոր վարդյակի և արմավատերևային զարդի վրա խաչի նշմարումով: Հորինվածքի տարբեր հատվածներում տեսնում ենք տարբեր թռչնաքանդակների տեղադրում, իսկ խորանի վերնանկյուններից կամ խաչի վերին թևից դեպի խաչահատումն իջնում են խաղողի ողկույզներ կամ արմավագարդեր: Խաչը նույնպես անցնում է զարգացման և ձևափոխման որոշակի ճանապարհ: Ոճական առումով այդ շրջանի խաչքարերին բնորոշ է քանդակի առավել կոթողայնությունը⁸: Թեև հետազոտությունները ցույց են տվել, որ խաչքարերի զարգացման վաղ (9–11–րդ դդ.) և ավարտական փուլում (16–17–րդ դդ.) դրանց ճարտարապետական ձևերն ու գեղարվեստական հորինվածքները ամենուրեք գրեթե միանման են, և միայն 12–րդ դարից են խաչքարերը ստանում վառ արտահայտված առանձնահատկություններ⁹, այդուամենայնիվ փորձենք առանձնացնել Մաքրավանքի վաղ շրջանի խաչքարերից (9–11–րդ դդ.) առավել աչքի ընկնողները և որոշ առումներով ոճական առանձնահատկություններ ունեցողները:

Մաքրավանքի հարավարևելյան կողմում՝ կիսավեր գավթի տարածքում է գտնվում 959 թ. մի խաչքար (նկ. 1): Վաղ շրջանի համար այն բավականին հետաքրքրական է: Նախ հատկանշական է թվագրումը, քանզի, ինչպես նշեցինք, այստեղ 10–րդ դարի բազմաթիվ խաչքարեր չկան, երկրորդ՝ խնդրո առարկա ստեղծագործությունը ուրույն տեղ է գրավում երկու հարևան մարզերում՝ Կոտայքում և Արագածոտնում առանձնացվող վաղ շրջանի խաչքարերի շարքում: Այսպես, այդ շարքի խաչքարերն են Կատրանիդե թագուհու՝ 879 թ. խաչքարը (նկ. 2) և 882 թ. թվագրվող խաչքարը Թալինում, 973 թ. խաչքարը Արուճում, 975 թ. Թալինի և 986 թ. Մուղնու խաչքարերը (նկ. 3): Այդ շարքում, ինչպես նշեցինք, ուրույն տեղ ունի նաև Կոտայքի, մասնավորապես Մաքրավանքի նշված խաչքարը: Վերոնշյալ շարքի գրեթե բոլոր խաչքարերում նկատելի են առաջին խաչքարերին բնորոշ պարզություն և վարպետների փորձառության պակաս¹⁰:

7 Սահակյան Ա. Ս., Խաչքարերի և ճարտարապետական մեծ կոթողների իմաստաբանական առնչություններ, «Լրաբեր» հասարակական գիտությունների, եր., 1987, N 6, էջ 72:

8 Տե՛ս Պետրոսյան Հ. Լ., Խաչքար, էջ 14–15:

9 Տե՛ս Варданесова Т. В., Культура Хачкаров Арагацотна и Котайка IX–XVII вв., с. 155.

10 Տե՛ս նույն տեղում, էջ 26:



Նկ. 1
Խաչքար, 959 թ., Մաքրավանք:



Նկ. 2
Խաչքար, 879 թ.:



Նկ. 3
Խաչքար, 986 թ., Մուղնի¹¹:

Մաքրավանքի խաչքարերի քննության առումով հարկ է անդրադառնալ Գառնու հնագույն գերեզմանոցի տարածքում գտնված մի խաչքարի (նկ. 4): Այս կոթողը ևս դասվում է վերը առանձնացված շարքին¹²: Խաչքարը ունի վաղ շրջանի համար բավականին հետաքրքրական լուծումներ. այն ներկայացնում է մեկ սալի վրա քանդակված, բայց շրջանակներով առանձնացված ու երկու հատվածի բաժանված և ըստ այդմ՝ երկու միանման խաչ կրող հորինվածք: Հետաքրքրական է, որ խաչի թևերի նման ավարտով հորինվածք տեսնում ենք նաև Մաքրավանքի խաչքարերից մեկում (նկ. 5), և եթե մի պահ անտեսենք այն հանգամանքը, որ Գառնու խաչքարը երկմաս է, տպավորություն կլինի, որ գործ ունենք միևնույն ստեղծագործության հետ: Այս խաչքարի կենտրոնական խաչի ստորին՝ երկու կողքերին նման փոքր խաչեր են: Ուստի հաշվի առնելով այս երկու խաչքարերի հորինվածքային նմանությունները՝ կարող ենք Մաքրավանքի վերոնշյալ խաչքարը ևս դասել վերը առանձնացված խաչքարերի շարքին: Ակնհայտ է, որ դրանք պատահականորեն չեն դասվում միևնույն շարքին, այլ կարծես հիմք են նախապատրաստում նշյալ տարածաշրջանի 12–15–րդ դդ. խաչքարերի համար, երբ «խաչքարային ողջ բազմազանությունը սկսեց միավորվել մեկ խաչքարային դպրոցի մեջ»¹³: Որքան էլ դյուրին չէ խաչքարային դպրոցը առանձնացնելը, այդուամենայնիվ, ոչ միայն արդեն հիշատակված, այլև այլ խաչքարերի օրինակով ցույց տանք, որ Կոտայքում գոյություն ունեցող ինքնուրույն դպրոցի շարքում իր ուրույն տեղն ունի նաև խաչքարերի «հրազդանյան տիպը»: Նրա մեջ են մտնում Մաքրավանքի խաչքարերը, իրողություն, որը լիովին դրսևորվում է միայն 12–րդ դ. վերջից:

¹¹ Լուսանկարները՝ Տ. Վարդանեսովայի:

¹² Տե՛ս նույն տեղում:

¹³ Նույն տեղում, էջ 156:



Նկ. 4
Խաչքար, 9-10-րդ դդ., Գառնի:



Նկ. 5
Խաչքար, 9-10-րդ դդ., Մաքրավանք¹⁴:

2. «Անիի ոճի» խաչքարերը

Մաքրավանքի 11-րդ դարի խաչքարերից առավել ուշադրության է արժանի գավթի տարածքում գտնվող խաչքարերից մեկը (նկ. 6): Խաչքարն արձանագիր է և թվագրվում է 1039 թվականով¹⁵: Այն ունեցել է պատվանդան, որն այժմ չկա: Խաչքարի կտորված լինելու պատճառով բացահայտորեն դժվարանում, ընդհուպ մինչև անհնար է դառնում դրա ամբողջական նկարագրությունը, սակայն միայն ստորին կեսն էլ բավական է՝ նշելու, որ գործ ունենք բավականին հետաքրքրական պատկերի հետ: Խաչը հենված է աստիճանաձև պատվանդանի վրա, որի կողքերից ծագում են արմավազարդեր: Այս հորինվածքների դեպքում արդեն կարելի է խոսել ոչ միայն սոսկ ուղղաձիգ արմավազարդի անդրադարձման, այլև նոր զարդաձևի ստեղծման մասին: Հորիզոնական այդ զարդը մի դեպքում կարծես հենց երկու հակադիր արմավենիների արտապատկերում լինի, բայց մյուս կողմից՝ այն ավելի նմանվում է լայնաթերթ, շքեղ մի թփի՝ հարդարված պտղային կլոր զարդերով:

Բավականին հետաքրքրական է աստիճանաձև պատվանդանի և հետագայում դրանից դեպի վարդյակ անցումային պատկերների տարբերակման հարցը: Այսպես, շարունակելով վաղմիջնադարյան որոշ խաչային հորինվածքներում ձևավորված ավանդույթը՝ մի շարք խաչքարերում վարդյակը դրվում է աստիճանաձև պատվանդանի վրա, իսկ արմավազարդը ծագում է հենց վարդյակի կողքերից: Աստիճանաբար՝ վարդյակի չափերի մեծացմանը զուգահեռ, վարդյակն ու աստիճանները դառնում են գրեթե իրար բացառող տարրեր: Սովորաբար որտեղ պատկերվում է աստիճանաձև պատվանդանը, բացակայում է վարդյակը և ընդհակառակը: Այդպիսի խաչքարերը դիտարկելիս կարող ենք զգրակացնել, որ այս երկուսն էլ՝ և՛ աստիճանաձև պատվանդանը, և՛ վարդյակը, սկզբնապես գտնվել են Գողգոթայի խորհր-

¹⁴ Լուսանկարները՝ Տ. Վարդանեստվայի:
¹⁵ Տես Պետրոսյան Հ. Լ., Խաչքար. ծագումը..., էջ 126:

դարանությանն առնչվող դաշտում¹⁶:

Ըստ ուսումնասիրողների՝ վարդյակի առաջին լիարժեք պատկերումները խաչքարային հորինվածքում վավերացված են Խծկոնքի 1031 թ. և Ցաղաց քարի 1041 թ. խաչքարերում¹⁷: Դատելով դրանից՝ Մաքրավանքի վերոնշյալ խաչքարի վրա վարդյակի բացակայությունը կարող ենք բացատրել նրանով, որ ըստ ամենայնի՝ վարդյակի պատկերման ավանդույթը դեռևս հստակորեն չէր ձևավորվել Մաքրավանքում¹⁸: Ըստ երևույթին՝ 1039 թ. այս խաչքարը պայմանականորեն «Անիի ոճի» հորինվածք է: Ստեղծված լինելով Անիի թագավորության ժամանակաշրջանում, միևնույն ժամանակ «հիմնվելով 11-րդ դ. թվագրված մի շարք հայտնի խաչքարերի, որոնցից են Անիի որոշ խաչքարեր և ուսումնասիրվող տարածաշրջանի 11-րդ դ. խաչքարերի համեմատական վերլուծության վրա՝ կարելի է գալ այն եզրակացության, որ չնայած Արագածոտնի և Կոտայքի խաչքարերի բազմազանությանը՝ դրանց հորինվածքի հիմքում ընկած է միևնույն հորինվածքի կառուցվածքը»¹⁹: Սրանք, ի տարբերություն 11-րդ դարի այլ խաչքարերի, արված են բարձր կատարողական վարպետությամբ: Այդ ազդեցությունը կրող խաչքարերի շարքին, բացի Մաքրավանքի վերոնշյալ խաչքարից, դասվում են նաև երկու խաչքար Արուձից, այլ օրինակներ նաև Աշտարակից և Հավուց Թառից, ևս մեկը՝ Հրագդանի տարածաշրջանից՝ Ջրառատի և Աղավնաձորի միջև գտնվող ճանապարհի հատվածից²⁰:

Հ. Պետրոսյանը նշում է, որ Մաքրավանքում, Բջնիում, Վահանավանքում, Սողքում, Վերին Խաչենում և Քաշաթաղում այսօր վավերացված են անհական այդ տիպի խաչքարեր²¹: Այդ հորինվածքները հիմնականում ներկայացնում են հիմնախարսի վրա կանգնեցված հավասարակողմ կամ երկարաձգված խաչ, ինչը ուսումնասիրվող խաչքարի դեպքում, չնայած վերևի հատվածի կոտրված լինելուն, որոշակիորեն նշմարվում է՝ բարդ կառուցվածքով արմավազարդ, խաչի թևերի՝ եռակի բողբոջների զույգով ավարտ, խաչի գագաթի՝ արմավենու ճյուղերով զարդարում: Վերջին բնութագրականը ուսումնասիրվող խաչքարի հետ համադրելը, ինչպես նշեցինք, խաչքարի կոտրված լինելու պատճառով անհնար է: Մյուս կողմից էլ՝ ընդհանուր առմամբ 11-րդ դարին բնորոշ է «հորինվածքների համատարած «արմավայնացումը»՝ խաչի արմավենաճյուղ թևեր, հորինվածքի վերևից ու ներքևից աճող արմավազարդեր, լայնաժապավեն հյուսվածքներ»²²: Ցավոք, խաչքարի գրեթե կիսով չափ պահպանված լինելու հանգամանքը մեզ թույլ չի տալիս ընդարձակելու դրա նկարագրությունը:

16 Տե՛ս նույն տեղում, էջ 279:

17 Տե՛ս նույն տեղում:

18 Վերոնշյալը գրելուն մեզ հիմք է տալիս այն հանգամանքը, որ Մաքրավանքում միևնույն՝ 1259 թվականին կանգնեցված և իրար կողք կողքի դրված երկու խաչքարերն ունեն և խաչատակի աստիճաններ, և վարդյակ: Այդ հանգամանքը հստակորեն ցույց է տալիս, որ նույնիսկ 13-րդ դարում խաչատակի աստիճաններից դեպի վարդյակ անցումը Մաքրավանքում դեռևս ձևավորված չէր: Այդ փաստին կանդրադառնանք հաջորդ հրապարակումներում:

19 **Варданесова Т. В.**, *Культура Хачкаров Арагацотна и Котайка IX–XVII вв.*, с. 160.

20 Տե՛ս նույն տեղում, էջ 41–43:

21 Տե՛ս **Պետրոսյան Հ. Լ.**, Անիի խաչքարային մշակույթը, «Անին միջնադարյան Հայաստանի քաղաքական և քաղաքակրթական կենտրոն, Միջազգային գիտաժողովի նյութեր», Եր., 2012, էջ 294:

22 **Պետրոսյան Հ. Լ.**, *Խաչքար...*, էջ 16:



Նկ. 6: Խաչքար, 1039 թ., Մաքրավանք²³:

Ինչպես տեսանք բերված օրինակներով, անիական ոճի 1039 թ. խաչքարը միակը չէ Կոտայքի կենտրոնական հատվածներում, և դա թույլ է տալիս նշել, որ այդ ոճի խաչքարերի պատրաստումը մասամբ դարձել էր բնորոշ Կոտայքում դրանից մեկ դար անց ձևավորվելիք «հրազդանյան տիպի» խաչքարերին: Դրա հետ մեկտեղ հարկ է նշել, որ այդպիսի հորինվածքով խաչքարեր հանդիպում են գրեթե ամենուրեք, և բավականին բարդ է դրա տարածման շրջանը որոշելը:

3. Կոտայքի խաչքարերի «հրազդանյան տիպը»

Այն, որ Կոտայքում գոյություն է ունեցել ձևավորված ինքնուրույն դպրոց, այլևս կասկածի տեղիք չի տալիս, ինչի մասին նշում են նաև ուսումնասիրողները: Այսպես, խոսելով այդ ժամանակաշրջանում ձևավորված ինքնուրույն ոճերի և խաչի թևերի եռաբլթակների՝ որոշ օրինակներում եռաբլթաբոցների վերածվելու փաստերի մասին՝ Լ. Պետրոսյանը ոչ թե Մաքրավանքի, այլ Կեչառիսի խաչքարերի օրինակով կարծես ինքնուրույն դպրոց է համարում նաև Կոտայքը: Ըստ նրա՝ «11-րդ դարում մի քանի դրսևորումներ ունեցավ ճարտարապետական կամարի մեջ ներառված հորինվածքը (Ցաղաց Քար, Հավուց Թառ, Արուձ, Բյուրական, Անի, Աշտարակ, Կեչառիս, Կարմիր վանք)»²⁴: Խոսելով արդեն 12-14-րդ դդ. խաչքարերի մասին՝ նա նշում է, որ այդ ժամանակաշրջանում նկատելի են դառնում տարածաշրջանային տարբերությունները: Այդ շարքին է դասվում նաև Արագածոտն-Կոտայքի դպրոց-

²³ Լուսանկարը՝ Լ. Պետրոսյանի:

²⁴ Նույն տեղում:

ցը²⁵: Կոտայքի՝ ինքնուրույն խաչքարային դպրոց ունենալու փաստի մասին կարդում ենք այլ ուսումնասիրություններում ևս. «Հետազոտվող տարածաշրջանում 9–17-րդ դդ., չնայած ձևերի տեսանելի բազմազանությանը, խաչքարերն ունեն բազմաթիվ ընդհանուր գծեր, ինչը թույլ է տալիս խոսել խաչքարային դպրոցի գոյության մասին»,– այսպես է եզրափակում Տ. Վարդանեստվան Կոտայքի և Արագածոտնի՝ 9–17-րդ դդ. խաչքարերին նվիրված իր աշխատությունը²⁶: Ըստ որում, նկատելի է, որ իրար բավականին նման և ըստ էության միևնույն դպրոցի նմուշ համարվող խաչքարերը գտնվում են երբեմն բավականին հեռու, ինչպես, օրինակ՝ 11-րդ դարի Բջնիի, Վահանավանքի և Ցաղաց Քարի խաչքարերը²⁷: Իրարից բավականին հեռու գտնվող վայրերում խաչքարերի ակնհայտ մերձավորությունը (տվյալ դեպքում խոսքը անիական ոճի ստեղծագործությունների մասին է, ուստի որպես օրինակ վերցնում ենք Խծկոնքի, Մաքրավանքի, Բջնիի, Ցաղաց Քարի, Սողքի, Քաշաթաղի և Վահանավանքի նշյալ խաչքարերը), հիմք է տալիս խոսելու «ոչ թե տարբեր տեղերում նույն խմբի խաչքարերի տարածման, այլ ավելի շուտ Անիում և նրա շրջապատում գործող վարպետների մի խմբի մասին, որոնց խաչքար էին պատվիրում ժամանակի հայտնի վանական կենտրոնները»²⁸: Իր հերթին Կոտայքում ձևավորված ինքնուրույն դպրոցի առանձին նմուշ է համարվում «հրազդանյան տիպը»: «Ուսումնասիրվող տարածաշրջանի համար բնութագրական է երկու՝ Արագածոտնի և Կոտայքի գեղարվեստական ոճերի առկայությունը, որոնք 12–15-րդ դդ. խաչքարերի ողջ բազմազանությունը միավորում են մեկ խաչքարային դպրոցի մեջ: Արագածոտնի գեղարվեստական ոճը բնորոշվում է «Աշտարակի տիպի» խաչքարային հորինվածքով, իսկ Կոտայքի ոճը տարածաշրջանի կենտրոնական մասերում՝ «Առինջի» և «Հրազդանի» տիպերով: Ավելի ուշ՝ 13-րդ դարասկզբին, Կոտայքում առանձնացվում է նաև «Գեղարդի» հորինվածքը, որն իր մեջ պարունակում է թե՛ Կոտայքի և թե՛ Արագածոտնի ոճական որոշ հատկանիշներ»²⁹:

Եզրակացություններ

Այսպիսով, չնայած ձևերի ոչ տեսանելի բազմազանությանը՝ ներկա ուսումնասիրությամբ փորձեցինք վեր հանել Մաքրավանքի 9–11-րդ դարերի խաչքարերի առանձնահատկությունները: Դրանք, իրենց վրա կրելով հանդերձ խաչքարային արվեստի զարգացման ընդհանուր օրինաչափությունները, արդեն իսկ 9–11-րդ դարերից ձեռք են բերում նաև զարգացման որոշակի առանձնահատկություններ և սկսած 12-րդ դարից՝ լիովին դրսևորվում են՝ ձևավորելով խաչքարերի «հրազդանյան տիպը»: Նման խաչքարերը դուրս չեն նաև զարգացման ընդհանուր օրինաչափություններից, ինչի ապացույցը այդ դարերին գրեթե ամենուրեք հանդիպող «Անիի ոճի» խաչքարերի առկայությունն է նաև Հրազդանում, մասնավորապես՝ Մաքրավանքում:

25 Տե՛ս նույն տեղում, էջ 22–23:

26 Տե՛ս **Վարդանեսոյ Կ. Բ.**, *Կուլտուրա Խաչարոս Արագածոտնի և Կոտայքի IX–XVII ԿԿ.*, ռ. 155:

27 Տե՛ս Կ արագածոտնի «արվեստի ոճի որոշումը»-ը Կոտայքի և Արագածոտնի մասին, «Հայագիտության հարցեր», **Վարդանեսոյ Կ. Բ.**, Եր., 2014, N 3, էջ 127:

28 **Պենրոյան Ը. Լ.**, Անիի խաչքարային մշակույթը, էջ 295:

29 **Վարդանեսոյ Կ. Բ.**, *Կուլտուրա Խաչարոս Արագածոտնի և Կոտայքի IX–XVII ԿԿ.*, ռ. 156:

Գեղամ Մ. Ասատրյան – արվեստաբան, ունի տպագրված վեց գիտական հոդված: Գիտական հետաքրքրությունները հիմնականում վերաբերում են հայ արվեստի պատմությանը, մասնավորապես միջնադարյան խաչքարային արվեստին: Ունի նաև տպագրված աշխատանքներ՝ նվիրված 19-րդ դ. վերջի և 20-րդ դ. սկզբի հայ ազգային-ազատագրական պայքարի պատմության և ազգային-հեղափոխական երգերի առնչություններին:

Summary

9–11th CENTURIES CROSS-STONES IN MAKRAVANK

Gegham M. Asatryan

Key words – Makravank, 9–11th centuries cross-stones, earlykhachkars, simplicity, Kotayk’s artistic style, “Hrazdan type” of cross stones, “Annie style”.

There are numerous cross-stones in different stages of preservation throughout the territory of the complex of Makravank located in the north-west of Kotayk’s regional center, Hrazdan. Early cross-stones date back to the 9–11th centuries. They, along with the patterns of general cross-stone art development, still have certain peculiarities and thus, since 9–11th centuries have been the basis for the “Hrazdan type” of cross-stones, which dates back to the twelfth century and is older than the other, i.e., “Geghard type” formed in Kotayk. They have played unique role in establishing it, as well as in the separation from the early cross-stones, that is, the cross-stone of 959 AD, which is a separate set of cross-stone school in two neighboring provinces of Kotayk and Aragatsotn. There are also several other early cross-stones as well as the cross-stone of 1039, which, as we found out is a cross-stone of “Annie style”. The latter clearly allows us to conclude that this style had not gone beyond the central parts of Kotayk.

Резюме

ХАЧКАРЫ 9–11-ГО ВВ. В МАКРАВАНКЕ

Гегам М. Асатрян

Ключевые слова – Макраванк, хачкары 9–11-го вв., ранняя хачкарная простота, котайкский художественный стиль, «разданский тип» хачкаров, «анийский стиль».

На территории комплекса Макраванк, расположенного на северо-западе города Раздан Котайкской области РА, есть многочисленные хачкары, созданные в разные века, которые находятся в различной степени сохранности. Первые хачкары датируются 9–11-ым веками. Они, будучи образцами

общего развития искусства хачкаров, имеют также определенные особенности и, таким образом, стали основой для «разданского типа» хачкаров, который восходит к двенадцатому столетию и древнее, чем сформировавшийся в Котайке другой тип хачкаров – «Гегардский». В создании этого типа хачкара особую роль играют некоторые из ранних хачкаров Макраванка, например, хачкар 959-го года, занимающий особое место среди хачкаров общей хачкарной школы Котайка и Арагацотна, а также найденный нами хачкар «анийского стиля» 1039 года. Последнее обстоятельство позволяет сделать ясный вывод о том, что этот стиль не выходит за пределы центральных частей Котайка.

REFERENCES

1. **Hakobyan T. Kh.**, Hay zhoghovrdi patmut'yan hisharzhan vayrery, Ye., "Luys", 1990. (In Armenian)
3. Harut'yunyan Z., Tundardzi k'aravanner, Ye., 2012. (In Armenian)
4. **Petrosyan H., L.**, Anii khachkarayin mshakuyt'y // Anin mijnadaryan Hayastani k'aghak'akan yev k'aghak'akrt'akan kentron, Mijazgayin gitajoghovi nyut'er, Ye., 2012. (In Armenian)
5. **Petrosyan H. L.**, Khachkar. tsagumy, gortsaruyt'y, patkeragrut'yuny, imastabanut'yuny, Ye., "Printinfo", 2008. (In Armenian)
6. **Petrosyan H. L.**, Khachkar, Ye., "Zangak" 2015 (In Armenian)
7. **Sahakyan A. S.**, Khachkareri yev chartarapetakan mets kot'oghneri imastabanakan arnchut'yunner // Lraber hasarakakan gitut'yunneri, Ye., 1987, № 6. (In Armenian)
8. **Vardanesova T. V.**, Kultura Khachkarov Aragatsotna i Kotayka IX–XVII vv., Ye., "YEGU izdatelstvo", 2016. (In Russian)
9. **Vardanesova T. V.**, K voprosu ob opredelenii "khudozhestvennoy shkoli" v culture khachkarov // Hayagitut'yan harts'er, Vardanesova T. V., Ye., 2014, tiv 3. (In Russian)
10. **Yakobson A.**, Ob armyanskikh khachkarakh // PBH, h. 1, p. 217–218. (In Russian)